հրդարանն նախարարին։ Թէ ի՞նչ է այդ ծածուկ խորհրդարանի պաշտօնը — ոչինչ չգիտենք, որովհետեւ այդ մասին այլեւս ոչ մի յիշատակութիւն չկայ «Որոգ. Փառաց»ի մէջ։ Ինչպէս երեւում է, հեղինակն էլ շփոթութեան մէջ է, որովհետեւ 12–ի խորհուրդն էլ նա սովորաբար կոչում է «ծածուկ խորհրդարան»։ Թերեւս այդ հիմնարկութիւնը միայն զինուորական որոշ գործերի համար է։ Ցամենայն դէպս, թէեւ մի քանի անգամ յիշւում է «ծածուկ խորհրդարանի» անունը, բայց թէ ո՞ր ծածուկ խորհրդարանը պիտի հասկանալ՝ 12–ինը թէ 6–ինը — դժուար է ասել։

4. Ընտրւում են 9 հոգի սպարապետութեան համար, որոնցից իւրաքանչիւր 3 հոգին կազմում է մի կոլլեգիալ սպարապետութիւն։ Այսպիսով Հայաստանն ունի 3 բանակ եւ 3 սպարապետութիւն — առաջին, երկրորդ եւ երրորդ կամ կարմիր, կապոյտ եւ դեղին, համաձայն բանակների դրօշակի գոյների։ Առաջին սպարապետը իւրաքանչիւր սպարապետութեան մէջ աւելի նախապատիւ է, քան երկրորդն ու երրորդը եւ երկրորդը աւելի նախապատիւ է, քան երրորդը։ Դա երեւում է նրանից, որ ժառանգական հանր. նախագահի որդիները հայոց բանակում կարող են բռնել երկրորդ սպարապետի պաշտօնը, բայց ոչ երբեք առաջինը (իդ, կբ, ծզ)։

5. Ընտրւում են 9 հոգի ասպետութեան, այսինքն՝ հեծելազօրքի համար ճիշդ նոյն հիմունքներով, ինչպէս սպարապետները։ Նախապատուութեան նոյն կարգը նաեւ այստեղ. (իե, կզ)։

6. Եւս 9 հոգի «վասն հրաց զօրագլխութեան», այսինքն՝ հոգալու բանակների զէնքի եւ ռազմամթերքի համար։ Հիմունքները նոյնն են, ինչ որ վերեւում տեսանք (իզ, կդ)։

7. Ընտրւում են 27 հոգի, որոնք բաժանւում են 9 կոլլեգիայի, իւրաքանչիւր կոլլեգիան 3 հոգուց բաղկացած։ Այդ կոլլեգիաներն են.—

ա. Լրտեսպետութիւն, բ. զինապետութիւն, գ. վառօդապետութիւն, դ. կառապետութիւն, ե. վրանապետութիւն, զ. կերակրապետութիւն, է. դանձապետութիւն, ը. երկրաչափութիւն, եւ թ. պետ տկարաց եւ աղքատաց։

Կոլլեգիաների անդամները իրենց պաշտօնների անուան հետ միասին կոչւում են առաջին, երկրորդ, երրորդ, օրինակ՝ առաջին լրտեսպետ, երկրորդ լրտեսպետ, երրորդ լրտեսպետ եւն. (իէ, կե, կզ, կէ, կթ, հ. հա, հբ, հգ)։

Կոլլեգիաների մասին քիչ յետոյ։

8. Ընտրւում են 60 հոգի երկրի 60 շրջանները կամ նահանգները կառավարելու համար կամ ինչպէս հեղինակն է ասում՝ «վասն ծայրագոյն իշխանութեան մէջ քաղաքաց կառավարելոյ»։ Սրանք երկրի նահանգապետներն են կամ կուսակալները (իը, ըժ)։

9. Ընտրւում են եւս 60 հոգի, որոնցից իւրաքանչիւրը, որպէս նախագահ, տեղերում լրացնում է կազմը, ընտրելով 8 հոգի եւ շրջանային կամ նահանգական դատարանը կազմում (իթ, կա)։

10. Ընտրւում են 90 հոգի Հայաստանի 90,000 զօրքի հաղարապետութեան համար համար (լ. իդ)։

11. Ընտրւում են 3 հոգի «վասն դիւրութեան եւ թեթեւութեան եւ հեշտութեան ջատագովելոյ առաջի ատենի տանուտէրաց մէջ տանն հայոց վասն հարկաց, մաքսից, բաժնից, հասից, տոկոսաց եւայլն վասն բարութեան հասարակ ժողովրդոց» (լա)։

12. Ընտրւում են եւս 3 հոգի «վասն զգուշանալոյ ի վերայ ռոճկի հատուցման պաշտօնէից»։ Ուրիշ խօսքով՝ նրանք մի տեսակ պետական վերահսկիչներ են, որոնց գլխաւոր պարտականութիւնն է սակայն հսկել ռոճիկների կանոնաւորութեան վրայ (լբ, հզ)։

Ահա այն բոլոր բարձր պաշտօնները, որոնք ընտրուելով պատգամաւորների միջից, պաշտօնի բերումով հարկադրուած են լինել այստեղ–այնտեղ, զուտ պարլամենտական աշխատանքները թողնելով մնացածներին կամ «տանուտէր» պատգամաւորներին։